Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
§ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ¦

Հոդված 3. Բացառություն կազմող կրեդիտավորման պայմանագրերը

1. Սույն օրենքով սահմանված պահանջները չեն տարածվում՝

1) այն կրեդիտավորման պայմանագրերի վրա, որոնց համար նախատեսված չէ որևէ տոկոսի կամ այլ հատուցման վճարում (կատարում).

~~2) հարյուր հազար դրամը չգերազանցող և տասը միլիոն դրամը գերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա.~~

3) §Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրերի վրա, բացառությամբ §Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի.

4) վարձակալության պայմանագրերի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պայմանագրերով նախատեսված է, որ վարձակալության օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքն անցնելու է վարձակալին: